

ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

JEAN BRISSAUD , Rapport sur le concours de 1900. (Académie des Sciences , Incriptions et Belles-Lettres de Toulouse) . Toulouse imp. Douladoure-Privat , 1901 (?). 8^o pp. 16.

ԸՐՊԸՐԹ Ճ . ԻՆԿՐՍՈՒ (թրգմ. երուանդ Ա. Խգնատիոսեան), ԾԱՌԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՔԱՐՈՂ մը : 1900 . ՓՈՔՐ 8^o էջք 56 : Գինն է 15 սէնթ . (բայց կը ծանուցանէ թէ բոլոր Հայ Բնթերցարաններու կրնայ ձրիաբար զրկել եթէ զիմելու Ըլլան իրեն) :

Յարգ . Թարգմանիչը սխալ քայլ մը առած է որ կը տանի զինքը դէպի խորխորատը : Այս բանն ըսելով չկարծէք թէ ես եկեղեցամոլ մըն եմ . բնա՛ւ . բայց կը յարգեմ մեր եկեղեցին . իր ինչ ինչ թերութիւննեկուն ալ աչք գոցելով . վասնզի եկեղեցին միութեան կապ մը եղած է մեր մէջ : Ինկրսուի քանի մը զաղափարներուն համամիտ գտնուելովս հանդեկձ՝ երբեք չպիտի ներեմ որ նա առ այժմ մուտ գործէ մեր մէջ , քանի որ եկեղեցւոյ շնորհիւ միայն պահպանած ենք մեր գոյութիւնը : ԱՐԵՎԱԿ ՏԵՐ-ՄԻՒԴՆԵԱՆ : Հայաստանեայց սուրբ եկեղեցու Քրիստոնէականը : Զեռնարկ զաւանաբանութեան : Թիֆլ . , տպ. Շարաձ . , 1900 : 8^o էջք 576 : Գինն է 2 ռուբ . :

Ա. ԱՀԱՐՈՒՆԵԱՆ , Պատկերներ (վերջին տարիների Տաճկահայոց կեանքից) : Հրատարակեց Վառվառէ Քանանեան : Մոսկ . , տպ. Գատց . , 1900 : Փոքր 8^o էջք 338 : Գինն է 1 ռուբ . :

Թերեւս քիչ գտնուի մեր մէջ Ահարոննեանի նման զգայուն եւ տաք սիրա ունեցող գրագէտ մը որ արդէն ծանօթ է «Մշակ»ի ընթերցողներու : Ահա այս աղնիւ երիտասարդին «Մշակ»ի մէջ հրատարակած եւ մասսամբ անտիպ Պատկերներն են որ լոյս կը տեսնեն այսօր հատորի մը մէջ ամփոփուած , հրատարակութեամբ տիկ . Վառվառէ Քանանեանի : Այս հատորն ամբողջութեամբ «մի դասն ողը է անօգնական հայ որբիկների համար» , եւ , ինչպէս կը գրէ Հրատարակիչն . «սրանց պէտքերին յատկացնելով այս հրատարակութեան արդիւնքը , մենք կարծում ենք , որ թշուառութեան այդ անմնզ զոհերի հեծեանքը կը շարժէ հասարակութեան կարեկցութիւնը» : — Մասնալ փափառղները պէտք է դիմեն առ Մմ. V. Kananoff . Souharevo , maison Kananoff . MOSCOU .

ՄՄԲԱՏ ՇԱՀԱՋԻԶԵԱՆ . Յիշողութիւններ Վարդանանց տօնի տոիթով : Մոսկ . , տպ. Բարին . , 1901 . 8^o էջք 65 : Գինն է 75 կոպ . : Բժիշկ ՍիՄԷԾԾ ՇԱՀԱՋԻԶԵԱՅ : «Մշակ»-ը . (25-ամեակի առթիւ) : 1896/7 թ. թ. կուսակցական պայյաբարը : Տպ. նոյն . , 1900 : 8^o էջք 98 : Գինն է 1 ռուբլի :

— . Մարդասիրութեան եւ աշխատանքի ազնիւ զինւորը՝ Իւրիյ Ալէքսէեւիչ Վեսելովսկի (1889-1899 թ. թ.) : Իւր . Ա. Վեսել . լուսաբարպատկերով : Տպ. նոյն . , 1901 : 8^o էջք 82 : Գինն է 60 կոպ . :

A. M EILLET , Note sur une difficulté générale de la Grammaire comparée . Chartres , imp. Durand . 8^o pp. 16 .

— Recherches sur la Syntaxe comparée de l'arménien. Partie II . (Extr. des «Mém. Soc. Ling . de Paris» , t. XI). Paris , imp . Nat . , 1901 . 8^o pp. 33 .

ԳՈՒԻՒՏՈՆ ՀՈՒՍԽԵԱՆ, նոր Բառդիրք պատկերազարդ, Փրանսահայ, Համար Ա. Ա-Ի. Փարիզ, տպ. Մորիսի, 1900. Մեջ 8⁰ էջը 1060: Գինն է 25 ֆր. :

Խշխան Լուսինեան լաւ խորհուրդ մը յղացած է պատրաստելով այնպիսի բառարան մը որ պարունակէ բոլոր դիտական բառերը, դիւրութիւն ընծայելու համար թարգմանիչներու: Խւրաքանչիւր գլխաւոր բառի առջև գրուած պատկերը մեծապէս կը նպաստէ նոյն առարկայի իմաստը լաւ կերպով ըմբռնելու: Դուք թողուած են այն բառերն որոնք գրեթէ անդործածելի են ֆրանսերէնի մէջ: բայց մինչեւ հիմա հրատարակուած ֆրանսահայ բառարաններու ամենաճոխն է բառերու առաստութեան կողմէ: Գիտական նորակազմը բառերու մէջ կան այնպիսիներ որոնք յաջողած են, բայց կան նաև այնպիսիներ՝ որոնք լաւ կերպով կազմուած չեն: Տպագրութիւնը մաքուր բայց թուղթը գէշ է:

Հ. Ս. Էֆիկելլն, Գրպանի ատլաս, Վենեսա, 1901: 8⁰ էջը 110 եւ 16 աշխարհացոյց տախտակք, բոլորն ալ գունաւոր եւ հայերէն տառերով: + տախտակ մը զանազան տէրութեանց դրօշակներու եւ 8 տախտակ մայրաքաղաքներու տեսարանները ներկայացնող: Գինն է 3 ֆր., մասնաւոր կազմով:

SOPON BEZIRDJIAN (Artiste-Dessinateur), L'Albert. Album des Beaux-Arts, contenant des dessins en style pur oriental pour la décoration et l'industrie. Marseille, 1900. XII pl. fol. Prix: 20 fr. Chez l'auteur, 5 rue Gozlin, Paris.

ՄԵՍՐՈՊ ՔՀ. ՄԵԼԵԱՆՆ, «Քահանայական խնդր»ի շուրջը: Թիֆլ., տպ. Վարդանեանցի, 1901: 8⁰ էջը 120: Գինն է 50 կ.: (Վաճառվում է Թիֆլիսում բոլոր հայ գրավաճառանոցներում եւ Բաթումում հեղինակի մօտ): Բժկ. ՎԱՀԱՆ ԱՐՄԵՐՈՒՆԻ, Բժկի զրոյցներ. N^o 1. Մի՛ խմբը: Թիֆլիս, 1901. գինն է 5 կոպ. : —, —, N^o 2. Վատ ցաւ. (պատկերազարդ): Հրտ. Պետերբ. հայ ուսանողութեան: Թիֆլ. 1901. գինն է 6 կոպ. :

Պր. Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆԸ իր հետեւեալ աշխատութիւնները նուիրած է խմբագրութեանս. — 1⁰ Հիւսուած բանից նախնի պատմագրաց Հայոց: Գրե Ա., Բ եւ Գ. 2⁰ Թովմա Մեծոփեցու յիշտակաբանը. 3⁰ Յովհաննէս Թէկուրանցին եւ իւր տաղերը. 4⁰ Ս. Լուսաւորչի աջը. 5⁰ Հայոց վանքերը. 6⁰ Մէրտիչ նազաշ եւ իւր տաղերը. 7⁰ նոր ժողովածու (Միջնդարիան Հայոց տաղեր եւ ոտանաւորներ). Ա., Բ եւ Գ պրակ. 8⁰ Գրիգորիս Սլթամարցին եւ իւր տաղերը, Յաւելուած՝ Աղեքսանդրի պատմութեան կաֆաները. 9⁰ Տէր Պետրոս Ա. Գետաղարձ. 10⁰ Մտեփաննոս Օրպէւեանի Ողբ ի ս. Կաթուղիկէն:

Ս. ԴԱՒԹԵԱՆ, Յայտագիր, Ե. տպ., 1901:

—, Երջաբերական-Մանուցագիր «Նոր-Դպրոց»ի:

Մ. ՅԱՎՀԱՆՆԵԼՍԵԱՆ 1⁰ Սկոփիանք ուամկին, 2⁰ Իրական կեանքի նուագներ, 3⁰ Քնարիկ, (Ժողովրդական երգեր):

K. J. BASMADJIAN, La Stèle de Zouarthnotz. (Extr. de «Rec. Trav. relat. à la Philol. et à l'Archéol. égyp. et assyr.» Vol. XXIII). Paris, libr. E. Bouillon, 1901. 4⁰ pp. 7.